## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Ջամալ Միրզոյանը, Անզոր Շաքոյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժ/պ՝ Արթուր Գրիգորյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վազիր Ավդալյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱԶԻՐ ԱՎԴԱԼՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 27-ի N 8 հերթական նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի Միրաք վարչական բնակավայրում գտնվող և «Ռեդ մերկուրի» ՍՊԸ-ի կողմից վարձակալած հողամասի կուտակված վարձավճարի գումարը անհուսալի համարելու մասին:

2.Ալագյազ համայնքի Սադունց վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Միջնատուն, Կանիաշիր և Ճարճակիս բնակավայրերի փողոցների և հրապարակի սալիկապատման աշխատանքների համար գումար հատկացնելու մասին:

4.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Միջնատուն, Կանիաշիր և Ճարճակիս բնակավայրերի փողոցների և հրապարակի սալիկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայության համար գումար հատկացնելու մասին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

Լսեցին
***ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱԳՅԱԶ, ՋԱՄՇԼՈՒ, ՄԻՋՆԱՏՈՒՆ, ԿԱՆԻԱՇԻՐ ԵՎ ՃԱՐՃԱԿԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՍԱԼԻԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 24-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 35 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Էդգար Շին» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված ՀՀԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/06 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ճանապարհներ» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 42.413.310 (քառասուներկու միլիոն չորս հարյուր տասներեք հազար երեք հարյուր տաս) ՀՀ դրամ հատկացնել և աշխատանքների 35 տոկոս կատարողականը հաստատելուց հետո փոխանցել «Էդգար Շին» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Միջնատուն, Կանիաշիր և Ճարճակիս բնակավայրերի փողոցների և հրապարակի սալիկապատման աշխատանքների գումար՝ համայնքի մասնաբաժին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

Լսեցին
***ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱԳՅԱԶ, ՋԱՄՇԼՈՒ, ՄԻՋՆԱՏՈՒՆ, ԿԱՆԻԱՇԻՐ ԵՎ ՃԱՐՃԱԿԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՍԱԼԻԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 24-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 35 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված Ն 9-12/22 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ճանապարհներ» ծրագրի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 105.000 (մեկ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Միջնատուն, Կանիաշիր և Ճարճակիս բնակավայրերի փողոցների և հրապարակի սալիկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայության գումար՝ համայնքի մասնաբաժին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58/

Լսեցին
***ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՐԱՔ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ <<ՌԵԴ ՄԵՐԿՈՒՐԻ>> ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՊԱՊԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանի 2021 թվականի մայիսի 26-ի թիվ ԵԴ/937/02/20 որոշումը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ալագյազ համայնքի Միրաք վարչական բնակավայրում գտնվող «Ռեդ մերկուրի» ՍՊԸ-ի կողմից վարձակալած հողամասի կուտակված 15 533 500 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վարձավճարը համարել անհուսալի:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Լսեցին

***ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱԴՈՒՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՊԱՊԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ինչպես նաև Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 13-ի N 10 որոշումը՝ Ալագյազ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը հաստատելու մասին, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ալագյազ համայնքի Սադունց բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն համարվող 02-009-0017-0014 ծածկագրով 0.13 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

Ավագանու անդամներ

ՖԱՅԶՈ ԱԼԻՅԱՆ

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ԱԼԻԽԱՆ ՀԱՄԵՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՍԵՐԺԻԿ ՄՈՒՐԱԴՈՎ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

*Համայնքի ղեկավարի ժ/պ*

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց՝* Վազիր Ավդալյանը

____________